Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/14-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11 դեկտեմբերի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Ավետյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Վարդանյանը, Լ. Գալֆայանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Մասնակից ընկերության կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Սարալանջի N 7/1 պոմպակայանի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/14-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն և «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ն գնահատող հանձնաժողովի 02.12.2024 թվականի թիվ 2 որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացրել են արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերով մասնակիցներ «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն և «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/14-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտով (այդ թվում շտկմամբ) ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/14-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին:
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/14-Ն ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/14-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ն. Ավետյան
անդամներ	_____	Տ. Վարդանյան
	_____	Ս. Աբազյան
	_____	Լ. Գալֆայան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան